

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«--» ----- 2021թ.

N--- -Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը /ոչ բնակելի տարածքները/ անհատույց օգտագործման իրավունքով 3 /երեք/ տարի ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ համաձայն հավելվածի:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

**Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող թվով հինգ անշարժ գույքերը՝ համաձայն հավելվածի, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

Քննարկվող տարածքներում գործում են ցերեկային խնամքի կենտրոն տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար և բարեգործական ճաշարան, ինչպես նաև իրականացվում է տնային խնամք տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը սոցիալական, առողջապահական և իրավաբանական ծառայություններ է մատուցում շուրջ **8000** միայնակ տարեցների, հաշմանդամների, փախստականների և այլ անապահով խմբերի: Թվով **2** տարածքներում գործում է նաև երեխաների զարգացման վերականգնողական կենտրոն՝ աուտիզմ ունեցող և Արցախից տեղահանված երեխաների համար: Յերեկային կենտրոններին կից գործում են նաև բարեգործական ճաշարաններ, որոնք հնարավորություն են տալիս լուծել կենտրոն հաճախող շահառուների սննդապահովման խնդիրը:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու **2020** թվականի դեկտեմբերի **23**-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման **2021** թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշմամբ հաստատված հավելվածի **3**-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու ««Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագիծ, համաձայն որի առաջարկվում է հավելվածում նշված տարածքները **3** /երեք/ տարի ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Հ. ՄԱՐԳՍՅԱՆ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ  
ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

**Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված  
 Երևան քաղաքի ավագանու  
 2021 թվականի սեպտեմբերի 14-ի  
 N .....-Ա որոշման

| <b>Տրամադրվող տարածք</b>                     | <b>Հասցե</b>                           | <b>Մակերես</b> |
|--|--|----------------|
| Երևանի հ.147 մանկապարտեզ ՀՈԱԿ                | Գ.Նժդեհ 42                             | 500.0քմ        |
| Երևանի հ.52 մանկապարտեզ ՀՈԱԿ                 | Ավան<br>Իսահակյան թաղ. հ.2/4           | 294.7քմ        |
| Համայնքային սեփականություն հանդիսացող տարածք | Ավան-Առինջ թաղ. 1-ին մ/շ հ. 3/14       | 656.4քմ        |
| Երևանի հ.56 մանկապարտեզ ՀՈԱԿ                 | Ավան-Առինջ թաղ. 1-ին մ/շ հ.1/14        | 686,4քմ        |
| Համայնքային սեփականություն հանդիսացող տարածք | Կ.Ուլնեցու 1 նրբ. հ.1 շենք հ.37 տարածք | 429.13քմ       |